ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀՄՁԲ-20-7/13-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 01-ը փետրվարի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Մանուչարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 26.05.2020թ. կնքված № ԳՀՄՁԲ-20-7/13-1 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) և ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 25-ի N 2186-Ա որոշումը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N ԳՀՄՁԲ-20-7/13-1 գնման պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2021թ. մայիսի 1-ը, պայմանով, որ այն կիրառվում է մինչև 2021թ. ՀՀ ՊՆ ծախսային ծրագրով նախատեսված նույն գնման առարկայի գնման մրցակցային ձևով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսվա վերջին օրը:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Կատարողի մատուցված Ծառայության միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 11 325 600 (տասնմեկ միլիոն երեք հարյուր քսանհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կկատարի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1 Հավելվածը բաղկացած է 1 թերթից, հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 02522157 ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. ՅՈԼՉՅԱՆ	«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 16 «Արդշինբանկ» ՓԲԸ, Երևանի մ/հ Հ/Հ 2472300596330010 ՀՎՀՀ 90018697 տնօրեն Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
Հ/հ	անվանումը	Չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Պայմանագրի իրավունքները և պարտավորությունները ծագում են համապատասխան Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համաձայնագիր կնքելու միջոցով
	դերձակի ծառայություններ, այդ թվում	**դրամ**	1			
1	Կոստյուն ձմեռային դաշտային	լ-կ	780	14520	11 325 600	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ
տնօրեն

Հ. ԽԱՆՈՒՄՅԱՆ

90018697

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2
№ ԳՀԾՁԲ-20-7/13-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 15-ը հունիսի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Մանուչարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 26.05.2020թ. կնքված № ԳՀԾՁԲ-20-7/13-1 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր), ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 25-ի N 2186-Ա որոշումը և այդ որոշման հիման վրա 01.02.2021թ. կնքված թիվ 1 համաձայնագիրը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է Կատարողի կողմից մատուցած ծառայության (այսուհետև՝ Ծառայություն) դիմաց կատարել վճարում:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 11 325 600 (տասնմեկ միլիոն երեք հարյուր քսանհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կկատարի համապատասխան սույն Համաձայնագրի N 1 Հավելվածով՝ սահմանված ժամկետում և կարգով:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են թիվ 1 համաձայնագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա սույն Համաձայնագիրը կնքելը ս.թ. փետրվարի 5-ից հետո կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում թիվ 1 համաձայնագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա Համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագրերը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1 Հավելվածը բաղկացած է 1 թերթից, հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան, Բագրամյան 2 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գանձապետական գործակալություն Հ/Հ 900011[illegible] ՀՎՀՀ 0252[illegible] ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 16 «Արդշինբանկ» ՓԲԸ, Էրեբունի մ/ճ Հ/Հ 2472300596330010 ՀՎՀՀ 90018697 տնօրեն Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված N 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման ենթակա ծառայության անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021թ. պետական բյուջեից ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ, ընդ որում՝		
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	Դերձակի ծառայություններ /Կոստյուն ձմեռային դաշտային/	98391120/37	11325600	11325600	11325600

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ
տնօրեն

Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ